ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արամ Խաչատրյանը, Նաիրա Խաչատրյանը, Սիրակ Հովակիմյանը, Արամ Հովսեփյանը, Անահիտ Ղազարյանը, Գարեգին Մարգարյանը, Արսեն Ստեփանյանը

Համայնքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր ՝ Լիպարիտ Թդևոսյանը

Լսեցին- *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի ավագանին որոշում է՝

1. Գառնի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարել հրապարակային սակարկումների միջոցով սահմանելով մեկնարկային գին համայնքի կարիքների համար համաձայն հավելվածի:

2. Աճուրդը տեղի կունենա 2023թվականին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին- ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի պահանջներով, ավագանին որոշում է.

1. Քաղաքացի Աշոտ Սուրիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի 07-021-0262-0029 կադաստրային համարի գյուղատնտեսական արոտավայր, հնդավոր նշանակության 0.466194 հա մակերեսով հողատեսքը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման, նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն որոշմամբ հաստատված Գառնի համայնքի գլխավոր հատակագծին,

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Լսեցին- ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Գեղամ Մարտիրոսի Հովհաննիսյանի դիմումը.ավագանին որոշում է.

1. Կոտայքի Մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող գյուղատնտեսական այլ հողամասը 0.04 հա մակերեսով (Վկայականի համար 0055049) Գեղամ Մարտիրոսի Հովհաննիսյանի կողմից փաստացի օգտագործվող, որը չի հանդիսանում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկվող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չգտնվող, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, գյուղատնտեսական այլ հողամասը ուղղակի վաճառքով օտարել փաստացի օգտագործող՝ Գեղամ Մարտիրոսի Հովհաննիսյանի, տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի չափով:

2.Հողամասի սահմանները որոշվումեն անշարժ գույքի իրավունքի գրանցման վկայականում առկա չափերով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Լսեցին- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 186-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է

Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 186-Ն որոշման (այսուհետ՝որոշում) մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի.

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամսահմանել 2023 թվականի նոյեմբերի 28-ը՝ժամը 17:30:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԺՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ